

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/2

17 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ավետիք Բաղայանի 23.09.2014թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 16.09.2014 թ-ի թիվ 5100389 ստուգման ակտի դեմ:

Ա/Ձ Ավետիք Բաղայանի գանգատում բերված փաստարկները.

Փոստային ծառայության միջոցով ստացվել է ՀՀ ՖՆ Սևանի տարածքային հարկային տեսչության կողմից կազմված 16.09.2014 թ-ի թիվ 5100389 ստուգման ակտը, որով առաջադրվել է տուգանք՝ 300.000 դրամի չափով:

Նշված ստուգման ակտն ակնհայտ անօրինական է և պետք է ճանաչվի անվավեր՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Բացի այն, որ նշված ակտով առաջադրվել է տուգանք մի խախտման համար, որը Ա/Ձ Ավետիք Բաղայանի կողմից թույլ չի տրվել, հսկիչ գնում կատարելու ընթացակարգն իրականացվել և ստուգման ակտը կազմվել է օրենքի կոպիտ խախտումներով:

Ստուգման ակտում մասնավորապես նշված է հետևյալը. «Հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ Սևանի ՏՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 6201060 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման արդյունքում կազմված թիվ 6201060 արձանագրությունը, որով արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից ՀՀ Կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտման փաստը և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Սկիզբ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով Ա/Ձ-ին առաջադրվում է տուգանք 300.000 դրամի չափով»:

Ինչպես վերոգրյալից հետևում է, ստուգման ակտը կազմելու համար հիմք է ընդունվել Սևանի ՏՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 6201060 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման արդյունքում կազմված 13.08.2014 թ-ի թիվ 6201060 արձանագրությունը:

Նշված արձանագրությամբ արձանագրվել է, թե իբր 2014 թ-ի օգոստոսի 12-ին ժամը 18:20-ին գնորդ՝ քաղաքացի Աքսաննա Խաչատրյանի կողմից ք.Սևան, Նաիրյան 142/2 հասցեում գտնվող մանրածախ առևտրի կետից կատարվել է հսկիչ դնում՝ 400 դրամի չափով՝ 4 հաա մեխակ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով, սակայն վաճառողուհի Արփինե Ինգնաթևոսյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան ՀԴՄ կտրոն չի տրամադրել:

Հայտնվում է, որ արձանագրության մեջ նշած խախտումը չի համապատասխանում իրականությանը: Իրականում տեղի է ունեցել հետևյալը.

2014 թ-ի օգոստոսի 12-ին ժամը 14:30-ից 15:00-ի սահմաններում Ա/Ձ Ավետիք Բաղայանին (այսուհետ նաև գանգատաբեր) պատկանող ծաղկի խանութ են այցելել Սևանի ՏՀՏ աշխատակիցները և խանութի աշխատակցին ասել են, թե իբր քիչ առաջ մի աղջիկ 3 հատ վարդ է գնել խանութից և նրան ՀԴՄ կտրոն չեն տրամադրել: Վաճառողուհին պատասխանել է, որ այդ օրն ընդհանրապես վարդեր չի վաճառել: Այդ պահին խանութում է գտնվել նաև հարևան խանութի վաճառողուհին: Նա հարկային տեսչության աշխատակիցներին ասել է, քիչ առաջ մի աղջիկ մտել և վարդեր գնել: Դրանից հետո հարկային տեսչության աշխատակիցները հավանաբար տեսնելով, որ ինչ-որ թյուրիմացություն է եղել, թողել հեռացել են: Ժամը 18:00-ից հետո նույն աշխատակիցները կրկին մտել են խանութ (այն պահին, երբ արդեն խանութը պետք է փակվեր), այս անգամ

վաճառողուիուն ասել են, որ քիչ առաջ խանութից մի տղամարդ չորս հատ վարդ է գնել, որի դիմաց նրան ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Վաճառողուիին կրկին ասել է, որ նման բան տեղի չի ունեցել: Այդ ժամանակ Ա/Ձ Ավետիք Բաղայանը գտնվել է Երևանում: Խանութի աշխատակցուիին բջջային հեռախոսով զանգահարել և այդ ամենը պատմել է զանգատաբերին: Աշխատակցուիին ասել է նաև, որ հարկային տեսչության աշխատակիցները գտնվում են խանութում և ցանկանում են ՀԴՄ-ի հետ ինչ-որ գործողություններ կատարել: Ա/Ձ Ավետիք Բաղայանը ասել է, որ եթե խախտում տեղի չի ունեցել, ապա նա իրավունք ունի թույլ չտալ: Սակայն հարկային տեսչության աշխատակիցները պատասխանել են, որ եթե թույլ չտրվի, ապա խոչընդոտման արձանագրություն կկազմվի և իրեն կտուգանեն:

Հարկային տեսչության աշխատակիցները նշել են, թե իբր հսկիչ գնմանժամանակ վճարված 400 դրամը խանութի վաճառողուիին հրաժարվել է վերադարձնել, ինչպես նաև չի ստորագրել ներկայացրած փաստաթղթերը: Դա բացարձակապես չի համապատասխանում իրականությանը, բանի որ բոլոր փաստաթղթերը ներկայացվել են փոստով:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ հարկային տեսչության աշխատակիցների գործողությունները եղել են անօրինական և կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ ակնհայտ անօրինական արձանագրություն և անօրինական ստուգման ակտ:

Հսկիչ գնման արդյունքների վերաբերյալ 13.08.2014 թ-ի թիվ 6201060 արձանագրությունը և կից փաստաթղթերը (այդ թվում՝ 14.07.2014 թ-ի թիվ 6201060 հանձնարարագիրը) Ա/Ձ Ավետիք Բաղայանը ստացել է փոստային ծառայության միջոցով՝ 21.08.2014 թ-ին: Դրանք ստանալուց հետո գրել է առարկություններ և ներկայացրել Սևանի ՏՀՏ: Այնուհետև կրկին փոստային ծառայության միջոցով ստացել է ստուգման ակտի նախագիծը, դրա վերաբերյալ նույնպես ներկայացվել է գրավոր առարկություններ: 2014 թ-ի սեպտեմբերի 18-ին կրկին փոստային ծառայության միջոցով ստացել է 16.09.2014 թ-ի թիվ 5100389 ստուգման ակտը:

16.09.2014 թ-ին կազմված թիվ 5100389 ստուգման ակտը ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ:

1. Ենթադրյալ հսկիչ գնումը կատարվել է ոչ աշխատանքային ժամի, ինչպես ակտում նշված է՝ ժամը 18:20-ին:

2. Ենթադրյալ հսկիչ գնումը կատարելուց հետո հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվել է ոչ թե նույն օրը, այլ մեկ օր հետո՝ 13.08.2014 թ-ին: Արձանագրության մեջ բացի ենթադրյալ հսկիչ գնում կատարողից ստորագրել են նաև հարկային տեսչության այլ աշխատակիցները: Ակնհայտ է, որ խախտվել է ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.5 և 1.6-րդ կետերի պահանջները:

3. Հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիրը հրապարակվել է 2014 թ-ի հուլիսի 14-ին, այնինչ այն զանգատաբերին ուղարկվել է միայն 2014 թ-ի օգոստոսի 20-ին: Այսինքն, հանձնարարագիրը ծանոթացման է ուղարկվել ավելի քան մեկ ամիս հետո, ինչը նույնպես համապատասխան իրավական ակտի պահանջների խախտում է: Այս առումով հիմքեր կան ենթադրելու, որ հարկային տեսչության աշխատակիցները այդ մեկ ամսվա ընթացքում մի քանի անգամ կատարել են հսկիչ գնում, որևէ խախտում չեն արձանագրել, վերջում էլ տեսնելով, որ լրանում է մեկամսյա ժամկետը, դիմել են նման քայլերի:

4. Հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագրում որպես հսկիչ գնում կատարելու վերաբերյալ ուսումնասիրության վայր նշվել է նա ք.Սևան, Նաիրյան 145/3 հասցեն, որում 2014 թ-ի հուլիսի 10-ից գործունեություն է ծավալում այլ անձնավորություն:

5. Աքսաննա Իսաչատրյանը տվել է համաձայնություն՝ հսկիչ գնման ուսումնասիրությանը մասնակցելու համար, սակայն դրանում առկա չէ համաձայնություն տալու ամսաթիվը:

6. Բացի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունից, կազմվել է նաև մեկ այլ արձանագրություն, որում նշվել է, որ հսկիչ գնումը կատարվել է ժամը 18:23-ին, այնինչ բոլոր փաստաթղթերում նշվել է, որ հսկիչ գնումը կատարվել է ժամը 18:20-ին:

7. Ստուգման ակտը կազմվել է ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ի կետի «ա» ենթակետի պահանջների խախտմամբ:

8. Ստուգման ակտում բացակայում է հարկային տեսչության աշխատակիցներից մեկի ստորագրությունը:

9. ՀՀ գործող օրենսդրության համաձայն վարչական ակտը որպես կանոն պետք է հանձնվի առձեռն, սակայան տվյալ դեպքում բոլոր փաստաթղթերը ուղարկվել են փոստով:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 16.09.2014 թ-ի թիվ 5100389 ստուգման ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Սևանի ՀՏ պետի 14.07.2014 թ-ի թիվ 6201060 հանձնարարագրի Ա/Ձ Ավետիք Բաղայանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 13.08.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6201060 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

Սույն թվականի օգոստոսի 12-ին, ժամը 18:20-ին քաղաքացի Աքսաննա Խաչատրյանի կողմից ք.Սևան, Նաիրյան 142/2 հասցեում գտնվող Ա/Ձ Ավետիք Բաղայանին պատկանող մանրածախ առևտրի կետից կատարվել է հսկիչ գնում՝ 400 դրամի չափով, այն է՝ գնվել է 4 հատ մեխակ, որի դիմաց վճարված կանխիկ գումարը վաճառողուհի Արփիինե Իգնատյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Այնուհետև ուսումնասիրությունն իրականացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման և ժամը 18:23-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 15.100 դրամ, որում վճարված գումարը ներառված չի եղել: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 18:24-ին չմուտքագրված 400 դրամ գումարը մուտքագրվել է ՀԴՄ և ժամը 18:24-ին նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 400 դրամ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 01.09.2014 թ-ին հրապարակվել է թիվ 5100389 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Ավետիք Բաղայանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 16.09.2014 թ-ի թիվ 5100389 ստուգման ակտը, որով գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում հսկիչ գնումն իրականացնող պաշտոնատար անձանց կատարած համապատասխան գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները հիմնավորում են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքի դիմաց վճարված գումարը ՀԴՄ չմուտքագրվելու և համապատասխան ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը: Մասնավորապես, հսկիչ գնումից հետո՝ ժամը 18:23-ին, ՀԴՄ-ից դուրս է բերվել Z

հաշվետվություն, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Այնուհետև կատարված վճարման արժեքը մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 18:24-ին կրկին անգամ դուրս է բերվել Z հաշվետվությունը:

Բացի այդ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 27.11.2003 թ-ի թիվ 1561-Ն որոշմամբ հաստատված կարգի 6.1 կետի դրույթներով ուսումնասիրությունն իրականացնող պաշտոնատար անձինք վերադարձրել են հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքը, որի վերաբերյալ 12.08.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման ակտը: Վերջինս ներկայացվել է վաճառողուհի Արփինե Իգնատյանին, որը սակայն հրաժարվել է այն ստորագրելուց և հսկիչ գնման գումարը վերադարձնելուց:

Քաղաքացի Աքսաննա Խաչատրյանի կողմից տրված համաձայնագրում դրա տրման ամսաթիվը բացակայելու վերաբերյալ նշվեց, որ Աքսաննա Խաչատրյանը սահմանված կարգով տվել է գրավոր համաձայնություն Ա/Ձ Ավետիք Բադալյանի մոտ 14.07.2014 թ-ից մինչև ուսումնասիրության ավարտն իրականացվելիք հսկիչ գնմանը որպես գնորդ մասնակցելու համար:

Հսկիչ գնումը ժամը 18:23-ին, այսինքն՝ ոչ աշխատանքային ժամին կատարված լինելու վերաբերյալ, նշվեց, որ գործում առկա է աշխատաժամանակի տևողությունը փոփոխելու մասին ՀՀ ֆինանսների նախարարի Ժ/պ Պ.Սաֆարյանի 12.08.2014 թ-ի թիվ 2/902-Ա հրամանը, որի համաձայն հսկիչ գնման հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձանց աշխատանքային ժամանակի տևողությունը 12.08.2014 թ-ին սահմանվել է մինչև ժամը 22:00:

Ստուգման ակտում հարկային տեսչության աշխատակիցներից մեկի ստորագրությունը բացակայելու վերաբերյալ նշվեց, որ ստուգման ակտում նշված Գ.Սարգսյանը ստուգման ակտը ստորագրելու պահին գտնվել է արձակուրդում, հիմք՝ ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ պետի 01.09.2014 թ-ի թիվ 89 հրամանը: Վերջինս համաձայն Գ.Սարգսյանը ս.թ. սեպտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 8-ը գտնվել է արձակուրդում:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները հիմնավորում են ընկերության կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտած լինելու հանգամանքը, որն իր հերթին առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Սևանի ՏՀՏ 16.09.2014 թ-ի թիվ 5100389 ստուգման ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ԱՒԻՐՈՒՄՅԱՆ